Երևանի Կիևյան փողոցի սկզբնամասում ստորգետնյա ուրբանիզացիայի ձևավորում

QR կոդ



Ծրագրի նկարագիրը

Սույն ծրագրով առաջարկվում է Երևանի Կիևյան փողոցի սկզբնամասում՝ Հրազդանի մեծ կամրջի հարակից տարածքի ստորգետնյա ուրբանիզացիայի ստեղծում՝ հետիոտն անցման կազմակերպմամբ: Առաջարկվող նախագծային տարածքը, որն իրենից ներկայացնում է Կիևյան փողոցի մուտքը, որոշակի լայնացումով, ներկայումս դարձել է առևտրային և հասարակական սպասարկման, ինչպես նաև տրանսպորտային միջոցների կուտակման ակտիվ վայր:
Առաջարկվում է նախագծել և կառուցել ստորգետնյա առևտրի և սպասարկման համալիր, որտեղ հնարավոր է նաև ավտոկայանատեղերի տեղաբաշխում: Միաժամանակ կնախատեսվի ստորգետնյա անցում հետիոտնի համար, որը խիստ անհրաժեշտ է տրանսպորտային այս բարդ հատվածի համար:

Տեխնիկական ցուցանիշներ

Նախագծային մակերեսը մեկ հարկում կկազմի մոտ 50մ x 44մ = 2 200 քմ: Հարկայնության խնդիրը /1 կամ 2 հարկ/ հնարավոր կլինի ճշտել տարածքի երկրաբանական հետազոտության արդյունքում:

Ծրագրի ժամկետներ

Ծրագրի իրականացման ժամկետը 3 տարի է:

Ծրագրի արժեքը

Մեկ հարկի համար՝ նախնական գնահատմամբ շինարարության արժեքը կկազմի 3,3 մլն ԱՄՆ դոլար, իսկ երկու հարկի համար՝ 6,6 մլն ԱՄՆ դոլար:

Ներդրումների ձևը և հիմնական պայմանները

Ծրագիրը նախատեսվում է համայնք մասնավոր համագործակցության շրջանակում:

Ներկա իրավիճակ

Առկա է էսքիզային նախագիծ՝ մշակված «Երևան նախագիծ» ընկերության կողմից: